



ՆԻԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2025Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ**



ՋԻ ԷՄ ԶՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՆԻԿԱ» ԵՆԹԱԿԱՌԱՌԻՑՎԱԾՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա կկամուտների, ծախսերի և գուտ ակտիվների փոփոխությունների մասին, և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմնադրամի 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները չեն ենթակվել աուդիտի, քանի որ Հիմնադրամի ակտիվները չեն գերազանցել 10 միլիոն դրամը:

Աուդիտի ընթացքում ձեռք ենք բերել բոլոր աուդիտորական ապացույցները 2025թ. սկզբնական մնացորդների վերաբերյալ և համոզվել ենք, որ 31.12.2024թ. դրությամբ արտացոլված բոլոր մնացորդները ճշմարիտ են:

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

**ԱՌԴԴՏՈՐԻ ՊԵՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԴԴՏԻ ՀԱՄԱՐ**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- ✚ Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- ✚ Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

✚ Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

✚ Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյո՞ք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

✚ Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 05.08.2026թ.

Ջի Էմ Քոնսալթ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝

Որակավորված աուդիտոր՝



Գոհար Մարգարյան

Արփինե Խաչատրյան

**«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

Բովանդակություն

- | | |
|---|---|
| 1 | Հոգաբարձուների խորհրդի կազմը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| 2 | Անկախ աուդիտորի եզրակացություն |
| 3 | Եկամուտների, ծախսերի և զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն |
| 4 | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն |
| 5 | Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն |
| 6 | Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ |
-

**Հոգաբարձուների խորհրդի կազմը
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

- | | |
|----|---|
| 1. | Խորհրդի նախագահ՝ Մարիա Իվանի Բադուլ |
| 2. | Խորհրդի անդամ՝ Վիկտորիյա Իգորի Աղաջանովա |
| 3. | Խորհրդի անդամ՝ Մերի Արտյոմի Մամիկոնյան |

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթգ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	217	257
Ոչ նյութական ակտիվներ		132	118
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		349	375
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	17,506	7,339
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		17,506	7,339
Ընդամենը ակտիվներ		17,855	7,714
Ոչ ընթացիկ պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ստացված փոխառություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	348	375
Զուտ ակտիվներ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	610	191
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	16,897	7,148
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		17,507	7,339
Ընդամենը պարտավորություններ		17,855	7,714

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ

Տնօրեն՝

Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝

Գ.Գաբրիելյան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ
Եկամտի և ծախսի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթգ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
Շնորհներից եկամուտ	4	37,471	8,790
Ծրագրային ծախսեր	5	(33,388)	(6,225)
Վարչական ծախսեր	6	(3,999)	(2,460)
Այլ եկամուտ			
Այլ ծախսեր		(79)	(97)
Գործառնական արդյունք		5	8
Ոչ գործառնական այլ եկամուտ/ծախս		(5)	(8)
Արդյունք մինչև հարկումը			
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ		-	-
Տարվա արդյունք			
Զուտ ակտիվները տարվա սկզբին		-	-
Տարվա զուտ արդյունք		-	-
Զուտ ակտիվները տարվա վերջին		-	-

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հիմնադրամի ղեկավարության կողմից 05.08.2026թ.:

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ

Տնօրեն՝

Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝

Գ.Գաբրիելյան



Եկամտի և ծախսի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Անհատույց ստացումից մուտքեր	47,194	15,685
Տրամադրված դրամաշնորհներ	(33,388)	(5,560)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(2,225)	(1,755)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(109)	(438)
Վճարումներ պետական բյուջե	(844)	(654)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ մուտքեր		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր	(459)	(300)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	10,169	6,978
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի 2025թ.	7,339	366
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(2)	(5)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի 2025թ.	17,506	7,339

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ

Տնօրեն՝

Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝

Գ.Գաբրիելյան



Դրամական միջոցների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ
 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթություններ
 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1. Գործառնական գործունեությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

**«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է հիմնադիրների խորհրդի՝ 2022 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ և գրանցվել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2022 թվականի մայիսի 17-ին:

Գրանցման համարն է 222.160.1238173:

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը հիմնադիրների խորհուրդն է, որն ընտրում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է երեք անդամից:

Հիմնադրամը չի հետապնդում քաղաքական նպատակներ և չի հարում որևէ քաղաքական հոսանքի:

- + Հիմնադրամի պաշտոնական անվանումն է՝ «Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ:
- + Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ա. Բաբաջանյան փող., 101/1, բն. 23:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունեցել է 2 աշխատակից (2024թ.՝ 2 աշխատակից):

1.2. Հիմնադրամի նպատակները

- + Նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:
- + Աջակցել Հայաստանի հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ենթակառուցվածքային համակարգերի ստեղծմանը, զարգացմանը և կատարելագործմանը:
- + Նախաձեռնել և աջակցել Հայաստանի և սփյուռքաշատ այլ երկրներում իրականացվող հայանպաստ ռազմավարական և ենթակառուցվածքային ծրագրերի իրագործմանը:
- + Նպաստել հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ռազմավարական ոլորտների ծրագրերի իրականացմանը, զարգացմանն ու տարածմանը:

Հիմնադրամի խնդիրներն են՝

- + Նպաստել հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ռազմավարական ոլորտների ենթակառուցվածքային հայեցակարգերի ու ծրագրերի մշակմանը և իրականացմանը, ինչպես նաև ընդհանուր նպատակներ հետապնդող տարբեր նախաձեռնություններին աջակցելուն:
- + Իր նպատակներն իրագործելու համար համագործակցել այլ հասարակական կազմակերպությունների հետ (այդ թվում՝ օտարերկրյա և միջազգային):
- + Իր կանոնադրական խնդիրների շրջանակում սահմանված կարգով մասնակցել պետական ծրագրերին:

Հիմնադրամն իր կանոնադրական խնդիրներն իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց և միջազգային կազմակերպությունների նվիրատվությունների ու նվիրաբերությունների, ինչպես նաև հանգանակություններից ստացված միջոցների հաշվին:

Գործարար միջավայր

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գնահատականը՝ գործարար միջավայրի՝ իր գործունեության և ֆինանսական վիճակի վրա ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև ռազմական հակամարտությունից հետո երկու երկրների միջև խաղաղ բանակցությունները և սահմանազատման գործընթացը դեռ ընթացքի մեջ են: 2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և որը ներառում էր հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա մնում են անորոշ:

Միևնույն ժամանակ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող հակամարտությունը շարունակում է անորոշություն ստեղծել բիզնես միջավայրում:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Հիմնադրամը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ իր գործունեության կայունությունն ապահովելու նպատակով: Այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատորեն գնահատելու, թե նման հանգամանքներն ինչ ազդեցություն կունենան Հիմնադրամի հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2. Դատրաստման հիմքերը

2.2. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունը շարունակում է անընդհատության սկզբունքով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.3. Զափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.4. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է, որը նաև Հիմնադրամի գործառնական արժույթն է, քանի որ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, եթե այլ բան նշված չէ:

Գումարային արժեքները կլորացվել են մինչև հազար դրամ:

2.5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Փոխանակելիության բացակայություն» փոփոխությունը (<ՀՄՍ 21-ի փոփոխություններ): Փոփոխության կիրառումը նշանակալի ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՀՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն հրապարակված, սակայն դեռ ուժի մեջ չմտած, նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.6. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումներ պատճառ հանդիսանալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Արտարժույթով գործարքներ

Հիմնադրամի գործառնական արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները:

Տարեվերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմել են 381.36 դրամ՝ 1 ԱՄՆ դոլարի, 449.01 դրամ՝ 1 եվրոյի և 4.8711 դրամ՝ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համապատասխանաբար 396.56 դրամ, 413.89 դրամ և 3.71 դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև:

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ	Հաշվարկման մեթոդ
Տրանսպորտային միջոցներ	8 տարի	Գծային
Արտադրատնտեսական գույք	8 տարի	Գծային
Համակարգչային տեխնիկա	1 տարի	Գծային

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Հիմնադրամի ոչ նյութական ակտիվները հիմնականում ներառում են ձեռքբերված ծրագրային ապահովումը և ծրագրային ապահովման օգտագործման իրավունքները:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո դրանք հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Սահմանափակ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվարկվում է գծային մեթոդով՝ դրանք գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ սկսած այն պահից, երբ ակտիվը պատրաստ է օգտագործման: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետը կազմում է 1-ից 5 տարի:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և ամորտիզացիայի մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Գնահատականների փոփոխությունների ազդեցությունը ճանաչվում է հեռանկարային կարգով՝ որպես հաշվապահական գնահատականի փոփոխություն:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է՝ արդյոք առկա են ոչ նյութական ակտիվների արժեզրկման հատկանիշներ: Նման հատկանիշների առկայության դեպքում Հիմնադրամը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը և անհրաժեշտության դեպքում ճանաչում արժեզրկումից կորուստ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ոչ նյութական ակտիվների գույքը հաշվեկշռային արժեքը կազմել է 132 հազ. դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 118 հազ. դրամ): Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հիմնադրամը չի հայտնաբերել ոչ նյութական ակտիվների արժեզրկման հատկանիշներ:

3.4 Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ստորև ներկայացված կատեգորիաներից մեկում՝ կախված այն նպատակից, որի համար ակտիվը ձեռք է բերվել:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները ներառում են այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, իսկ պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսների վճարումներ են: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած ձեռքբերմանը կամ թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած արժեքի կամ պահուստը:

Ընթացիկ և ոչ ընթացիկ առևտրային դեբիտորական պարտքերի ակնկալվող վարկային կորուստները գնահատելու նպատակով Հիմնադրամը կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ ճանաչելով ամբողջ ժամկետի ակնկալվող վարկային կորուստները: Առևտրային դեբիտորական պարտքի անհավաքագրելիության հաստատման դեպքում ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեքի կամ պահուստները ճանաչվում են ակնկալվող վարկային կորուստների մոդելի հիման վրա: Պահուստի չափը որոշվում է՝ հաշվի առնելով, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո արդյոք տեղի է ունեցել վարկային ռիսկի նշանակալի աճ: Եթե վարկային ռիսկը նշանակալիորեն չի աճել, ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող վարկային կորուստները, իսկ նշանակալի աճի դեպքում ամբողջ ժամկետի ակնկալվող վարկային կորուստները:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները: Բանկային օվերդրաֆտները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են ընթացիկ պարտավորություններում վարկերի և փոխառությունների ներքո:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է՝ ելնելով պարտավորության առաջացման նպատակից:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվետու ամսաթվի դրությամբ առկա ֆինանսական պարտավորությունների համար:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

- Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած դրանց ստացմանն ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսային ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:
- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, եթե վերջինս էականորեն տարբերվում է սկզբնական արժեքից:

3.5 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները մարելու, այլ ոչ թե ներդրումային կամ այլ նպատակներով: Հիմնադրամը ներդրումները դասակարգում է որպես դրամական միջոցների համարժեքներ միայն այն դեպքում, երբ դրանք հեշտությամբ փոխարկվում են նախապես հայտնի գումարով դրամական միջոցների, և դրանց արժեքի փոփոխության ռիսկը նշանակալի չէ:

3.6 Շնորհներ

Շնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են Հիմնադրամին՝ կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրական արժեքով, երբ առկա է հիմնավորված հավաստիացում, որ՝

- Հիմնադրամը կկատարի շնորհներին առնչվող պայմանները, և
- շնորհները կստացվեն:

Ստացված շնորհները, որոնց փոխանցման հետ կապված չեն գործում որևէ պայմաններ, ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են ստացման ենթակա:

Հիմնական միջոցների ձեռքբերմանը վերաբերող շնորհները հետաձգվում և ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ գծային մեթոդով, համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում և ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում ճանաչվում են այն ծախսերը, որոնց փոխհատուցման համար դրանք ստացվել են:

3.7 Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի միջին կշռված արժեքի բանաձևը:

3.8 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամը, որպես անցյալ դեպքի հետևանք, ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Որպես պահուստ ճանաչված գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականն է:

3.9 Հարկեր

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է, որը հաշվարկվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով ու այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված առանձնահատկությունները:

Շահութահարկի հաշվարկման իմաստով հարկատուի շահույթը համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներն այն հատուցումներն են, որոնք ակնկալվում է ամբողջությամբ մարել այն տարեկան հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու որևէ իրատեսական այլընտրանք չունի:

3.11 Եկամուտ

Հիմնադրամը 2025 թվականին հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ չի ստացել: Եթե նման հասույթ առաջանա, դրա ճանաչման համար Հիմնադրամը կիրառում է հետևյալ հինգ քայլից բաղկացած մոտեցումը՝

1. Հաճախորդի հետ պայմանագրի նույնականացում:
2. Կատարման ենթակա պարտականությունների նույնականացում:
3. Գործարքի գնի որոշում:
4. Գործարքի գնի բաշխում կատարման ենթակա պարտականությունների միջև:
5. Հասույթի ճանաչում, երբ (կամ այնքանով, որքանով) կատարման ենթակա պարտականությունը բավարարվում է:

Ծնորհներից եկամուտ

Ծնորհներից եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.5-ում:

4. Ծնորհներից եկամուտներ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներից	37,417	8,711
Ակտիվներին վերաբերող շնորհներից	54	79
Ընդամենը եկամուտ	37,471	8,790

5. Ծրագրային ծախսեր

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ցանդեքս ծրագիր – Աջակցություն բարեգործական հիմնադրամներին	31,522	5,720
Վոկալ քառյակի հովանավորություն	-	505
Ցանդեքս ամանորյա նախագիծ – Տոնածառ	1,466	-
Տարագծեստ համահայկական մշակութային փառատոն	400	-
Ընդամենը ծրագրային ծախսեր	33,388	6,225

6. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և սոց. վճարներ	2,896	2,421
Արձակուրդների պահուստ	578	-
Բանկային ծառայություններ	64	39
Այլ ծախսեր	461	-
Ընդամենը ծախսեր	3,999	2,460

7. Հիմնական միջոցներ

	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Մնացորդն առ 01.01.2024թ.	323	323
Ավելացումներ		
Նվազեցումներ		
Մնացորդն առ 31.12.2024թ.	323	323
Ավելացումներ		
Օտարումներ		
Մնացորդն առ 31.12.2025թ.	323	323
Կուտակված մաշվածություն		
Մնացորդն առ 01.01.2024թ.	5	5
Ավելացումներ	61	61
Նվազեցումներ		
Մնացորդն առ 31.12.2024թ.	66	66
Ավելացումներ	40	40
Նվազեցումներ		
Մնացորդն առ 31.12.2025թ.	106	106
Զուտ հաշվեկշռային արժեք		
Մնացորդն առ 31.12.2024թ.	257	257
Մնացորդն առ 31.12.2025թ.	217	217

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Դրամային հաշիվ	17,468	7,299
Արտարժույթային հաշիվ*	38	40
Ընդամենը դրամական միջոցներ	17,506	7,339

9. Ակտիվներին վերաբերվող շնորհներ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	375	
Ավելացում	27	455
Եկամուտ ճանաչված	(54)	(80)
Վերադասակարգված	-	-
Տարեվերջի մնացորդ	348	375

Եկամուտներին վերաբերվող շնորհներ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	7,148	629
Ավելացում	47,194	15,685
Եկամուտ ճանաչված	(37,418)	(8,711)
Վերադասակարգված	(27)	(455)
Տարեվերջի մնացորդ	16,897	7,148

10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	32	18
Պետական բյուջեին կրեդիտորական պարտքեր	-	48
Աշխատակիցներին	-	125
Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային վճ. պահուստ	578	-
Ընդամենը	610	191

11. Կապակցված կողմեր

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի՝ կողմերը համարվում են կապակցված, եթե մի կողմը վերահսկում կամ համատեղ վերահսկում է մյուս կողմին, էական ազդեցություն ունի նրա նկատմամբ կամ հանդիսանում է նրա հիմնական ղեկավար անձնակազմի անդամ: Սույն ֆինանսական հաշվետվությունների նպատակով կապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի հիմնական ղեկավար անձնակազմի անդամներին և նրանց հետ կապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց ու կազմակերպություններին, որոնք կապակցված են Հիմնադրամի հետ:

Հիմնադրամի կապակցված կողմ է՝

- Տնօրեն Ազնեսա Սարգսյան

ա) Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարում Հիմնադրամն իր կապակցված կողմերի հետ գործարքներ չի իրականացրել:

բ) Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	1,248	1,352

12. Կարևոր հաշվապահական գնահատումներ և ենթադրություններ

Հիմնադրամը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է նշանակալի ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտման:

Անընդհատության սկզբունք

Հիմնադրամի ղեկավարությունն ունի հիմնավորված ակնկալիք, որ Հիմնադրամը կարող է շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

13. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ստորև:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ դասերի

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.
Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ	17,506	7,339
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	17,506	7,339

Ֆինանսական պարտավորություններ			
Հազար դրամ	2025թ.	2024թ.	
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	32	18	
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	32	18	

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտարկում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

14. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի:

Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոնները

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի մյուս կողմի՝ պայմանագրային պարտականությունները չկատարելով: Հիմնադրամի վարկային ռիսկը հիմնականում առաջանում է դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով: Հիմնադրամի համար ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող տեղական բանկերը:

Վարկային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ակտիվներ՝		
Մնացորդներ բանկերում	17,506	7,339
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	17,506	7,339

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 17,506 հազ. դրամ, ինչը ներկայացնում է այդ ակտիվների գծով վարկային ռիսկի առավելագույն ազդեցությունը: Բանկային հաշիվների մնացորդների գծով վարկային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

Հիմնադրամի գնահատմամբ՝ բանկային հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել՝ հաշվի առնելով դրանց կարճաժամկետ բնույթը և բանկերի վարկունակությունը:

Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, մասնավորապես՝ արտարժույթային ռիսկի:

Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը նվիրատվություններ և շնորհներ չի ստանում արտարժույթով և, հետևաբար, էականորեն չի ենթարկվում արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքներն իրականացվում են հայկական դրամով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը Հիմնադրամի՝ իր ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելիս դժվարությունների հանդիպելու ռիսկն է:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս նպատակով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

15. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական երաշխիքներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

Իրավական պարտավորություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգին բնորոշ են օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն հստակ չեն կամ հակասական են և կարող են հանգեցնել տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո չեն տեղի ունեցել այնպիսի էական դեպքեր, որոնք պահանջում են ճշգրտում կամ բացահայտում սույն ֆինանսական հաշվետվություններում:

«Նիկա» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ

Տնօրեն՝

Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝

Գ.Գաբրիելյան